8. ոչ միայն չեն համապատասխանում, այլեւ հակասում են Հարկային օրենսգրքի հայեցակարգում ամրագրված մի շարք մոտեցումներին, սկզբունքներին եւ նպատակներին:

Քննարկման մասնակիցները նշում են նաեւ, որ, խախտվել են գործող օրենսդրության իրավանորմերը նախագծերի հանրային քննարկումը կազմակերպելու վերաբերյալ եւ նախագծերի փաթեթը ոչ միայն նախապես ամբողջությամբ չեն քննարկվել մասնագիտական կազմակերպությունների հետ, այլեւ նախագծերում չեն ներկայացված անհրաժեշտ պատշաճ հիմնավորումներ այդ փոփոխություններն իրականացնելու եւ

դրանց՝ պետական բյուջեի վրա ազդեցության գնահատականների, դրանց սոցիալական եւ ֆիսկալ արդյունքների վերաբերյալ:

Տպավորություն է ստեղծվում, որ հարկային փոփոխությունների այս նախագծերի մշակման ժամանակ առաջնային են եղել Հայեցակարգի այն դրույթները, որոնք ներդաշնակ են ԵԱՏՄ համաձայնագրին, մինչդեռ, մեր կարծիքով, հաշվի չեն առնվել աշխարհաքաղաքական վերջին իրադարձությունները, դրա արդյունքում Հայաստանի նոր դերակատարությունը տարածաշրջանում:

**Հանրային քննարկման մասնակիցները հայտարարում են, որ եկամտային հարկի համահարթեցման առաջարկությունը.**

կհանգեցնի ցածր աշխատավարձ ստացողների տնօրինվող եկամտի անուղղակի փոքրացմանը (հաշվի առնելով փոփոխությունների փաթեթով առաջարկվող ակցիզային հարկի դրույքաչափերի ու մաքսատուրքերի սպասվող բաձրացման արդյունքում գնաճային ճնշումը) եւ բարձր աշխատավարձ ստացողների տնօրինվող եկամուտների ուղղակի բարձրացմանը,

սոցիալական առումով դա կհանգեցնի օրենքով Ջինի բարձր գործակցի ամրագրմանը, ինչը կնպաստի աղքատության խորացմանն ու սրացմանը,

սոցիալական առումով դա կհանգեցնի նաեւ օրինական հարստացողների դասի առաջացմանը, սակայն նրանցից չենք պահանջելու վճարել բարձր հարկեր, դրանով խախտելով «Հարստացիր, որպեսզի հարստացնես» հեղափոխական արդարացի հռչակագիրը,

մակրո մակարդակում դա կհանգեցնի վճարունակ պահանջարկի, դրանով պայմանավորված՝ նաեւ՝ համախառն սպառման, նվազեցմանը,

մակրո մակարդակում դա կհանգեցնի նաեւ համախառն կուտակման մեծացմանը, եւ վերջինս, ինչպես ցույց է տալիս փորձը, չի եղել եւ առայժմ չի կարող լինել ներդրումների ներքին աղբյուր եւ կհոսի դեպի օֆշոր: Հետեւաբար, մենք գրավիչ չենք դարձնի ներդրումային դաշտը, կհանգեցնի բացասական ֆիսկալ էֆֆեկտի՝ պետական բյուջեի եկամուտների զգալի նվազեցմանը,

վերոհիշյալի պարագայում Նախագծերով կատարված առաջարկությունները ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացման եւ անվանացանկի ավելացման ուղղությամբ կհանգեցնեն սպառողական ապրանքների գների աճին:

Ակնհայտ է, որ բյուջետային ճեղքվածքը լրացնելուն միտված մյուս փոփոխություններն՝ ուղղված հարկման հիմնական շեշտադրումը կատարել սպառումը հարկելու վրա, բացասաբար են ազդելու ՀՀ քաղաքացիների ճնշող մեծամասնության տնօրինվող եկամուտների վրա եւ նպաստելու են նրանց սոցիալական վիճակի էլ ավելի վատթարացմանը, ինչը կդրսեւորվի աղքատության խորացման ու սրացման մակարդակի բարձրացման, նրանց սահմանադրական սոցիալական մի շարք իրավունքներից օգտվելու սահմանափակման ձեւով:

Ելնելով վերոհիշյալից եւ արդեն իսկ ՀՀ ԱՆ www.e-draft.am պաշտոնական կայքում հնչած հանրային կարծիքներից, հանրային քննարկման մասնակիցները առաջարկում են.

1. առաջարկված փոփոխությունների շատ քննադատվող դրույթների վերաբերյալ կազմակերպել հանրային մասնագիտական քննարկումներ քաղաքացիական հասարակությանյան մասնագիտական կառույցների ներկայացուցիչների հետ: Հավասարության սկզբունքով կառավարության ու ՔՀԿ ներկայացուցիչներից ձևավորել մասնագիտական աշխատանքային խումբ, վերջինիս համար վարձատրություն նախատեսել պետական բյուջեում և հանձնարարել մինչև 2019թ. ապրիլի վերջը մշակել Հարկային օրենսգրքի առավել խնդրահարույց իրավակարգավորումերի փոփոխությունների ու լրացումների փաթեթ եւ ներկայացնել ՀՀ ԱԺ հաստատման,
2. վերանայել եկամտային հարկի համահարթ տարբերակը, սահմանելով միջազգայնորեն ընդունված պրոգրեսիվ եկամտային հարկահանություն,
3. անվերապահորեն կիրառել «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի եւ կեսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թ. մարտի 16-ի օրենքի պահանջները եւ դրա դրույթներին համապատասխան հաշվարկված ամենամյա «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի» չափով սահմանել չհարկվող շեմ»՝ ներկայիս սոցիալ-

տնտեսական պայմաններին համահունչ 110 հազար դրամի չափով, հետագայում դա ինդեքսավորելու պայմանով.

4. հանել ՀՀ հարկային օրենսգրքի 159-րդ հոդվածի 3-րդ մասը եւ 160-րդ հոդվածը,
5. ակցիզային հարկի տնտեսագիտական բովանդակությանը համահունչ ակցիզային հարկով հարկվող ապրանքատեսակների անվանացանկը լրացնել վնասակար սպառում ենթադրող եւ շքեղություն բնութագրող ապրանքատեսակներով,
6. բարձրացնել 40 մլն դրամից ավել անշարժ գույքի գույքահարկի դրույքաչափերը՝ սահմանելով շքեղության հարկին համահունչ դրույքաչափեր,
7. բարձրացնել բնօգտագործման հարկի եւ բնապահպանական վճարի դրույքաչափերը,
8. դադարեցնել Հարկային օրենսգրքում շարունակաբար և հաջորդաբար փոփոխություններ կատարելու պրակտիկան,
9. սահմանել հարկային քաղաքականության նպատակները թավշյա հեղափոխությունից հետո ստեղծված նոր իրավիճակում եւ ըստ այդմ մշակել նոր հարկային օրենսգիրք,
10. սույն փոփոխությունների կիրառումը նախատեսել 2020 թ. հունվարի 1-ից:
    Կայուն և կանխատեսելի հարկային միջավայրի ձևավորումը բարեփոխումների ներկա փուլում խիստ անհարժեշտ գերակայություն է: Դա հատկապես կարեւորվում է տնտեսական հեղափոխության մարտահրավերների իրականացման տեսակետից, քանի որ մեր երկրում սահմանված կայուն, կանխատեսելի հարկային քաղաքականությունը երաշխավորված ներդրումային ու գործարար միջավայր ապահովելու կարեւորագույն երաշխիքներից մեկն է:

Հաստատված է
ՄարդուԻրավունքներիՊաշտպանության կոալիցիայի
համաժողովի կողմից

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ

ԵՐԵՎԱՆ - 17հոկտեմբեր, 2018թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ՄարդուԻրավունքների Պաշտպանության կոալիցիան (այսուհետև՝ Կոալիցիա) ձևավորվել և գործում է մարդու իրավունքներին վերաբերող արժեքների ընդհանրության, կամավորության, հավասարության,ինքնուրույնության, բարեխղճության և կառավարման կոլեգիալության սկզբունքներիհիման վրա:
1.2 Կոալիցիան հասարակական կազմակերպությունների ոչ ֆորմալկազմավորում է և գործում է Հայաստանի Հանրապետության գործողօրենսդրությանը, ինչպես նաև 2018 թվականի հոկտեմբերի 17-ին Կոալիցիայի անդամկազմակերպությունների հիմնադիր ժողովի ժամանակ ընդունված Համաձայնագրին ևսույն կանոնակարգին համապատասխան:
1.3 Կոալիցիայի անվանումն է.

- հայերեն՝ ՄարդուԻրավունքների Պաշտպանության կոալիցիա,հապավումը՝ ՄԻՊԿ:
- ռուսերեն՝ Коалиция Зашиты ПравЧеловека, հապավումը՝КЗПЧ,
- անգլերեն՝Coalition for Defence Human Rights,հապավումը՝CDHR,

1.4 Կոալիցիան կարող է իր նպատակներից և խնդիրներից բխող առաջարկություններներկայացնելՀՀպետականկառավարման, տեղական ինքնակառավարման, դատական իշխանության եւ ՀՀ սահմանադրությամբ նախատեսված այլ մարմիններին:
1.5 Կոալիցիան կարող է համագործակցել ինչպես ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, դատական իշխանության եւ ՀՀ սահմանադրությամբ նախատեսված այլ մարմինների, արտասահմանյան, միջազգային և տեղական կազմակերպությունների,այնպես էլ ոչ պետական մարմինների ու անհատ անձանց, ԶԼՄ-ների հետ:1.6 Կոալիցիան կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչկառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների ցանցերի, կնքելհուշագրեր և համաձայնագրեր օտարերկրյա, միջազգային, տեղականկազմակերպությունների և պետական ու ոչ պետական մարմինների հետ:
1.7 Կոալիցիայի քարտուղարության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն,քաղաք Երևան, Ղ Փարպեցի փողոց, շենք 9բ, գրասենյակային տարածք 26՝ որը ենթակա է փոփոխման:

## 2. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Կոալիցիայի նպատակներն են.
ա) Բարձրացնել հասարակական կազմակերպությունների (այսուհետև՝ ՀԿ-ներ) կողմից մարդու իրավունքների ոլորտում բարեփոխումներինկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետությունը:
բ) Նպաստել մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների անվերապահ իրացմանն ու դրանց պաշտպանության մակարդակը,

գ)Նպաստել մարդու իրավունքների խախտումների վերացմանն ուղղված արդյունավետքաղաքականությունների և կառուցակարգերի ներդրմանն ու զարգացմանը, նպաստելբարեխիղճ՝ թափանցիկ, հաշվետու, արհեստավարժ կառավարման համակարգիզարգացմանը:
դ) Նպաստել հասարակության մեջ մարդու իրավունքների խախտումների՝ որպեսհասարակությանսպառնալիքի ընկալման ձևավորմանը և արմատավորմանը, նշված խախտումների նկատմամբհասարակության անհանդուրժողականության ընկալման, քամահրանքի միջավայրի նհասարակության շրջանում մարդու իրավունքների հարգման պահանջարկիձևավորմանը նհասարակության իրազեկության մակարդակի բարձրացմանը:
ե) Ամրապնդել մոնիթորինգի, հանրային վերահսկողություն իրականացնելու և մարդու իրավունքների պահպանմանն պաշտպանության գործունեության իրականացման հետ կապված ՀԿ-ներիկարողությունները:
2.2 Կոալիցիայի խնդիրներն են.
ա) Մշակել և իրականացնել ծրագրեր՝ ուղղված հասարակության կողմիցմարդու իրավունքների հարգման ընկալման և իրազեկության մակարդակի բարձրացմանը, մարդու իրավունքների խախտումների կանխարգելման պայքարում հասարակության մասնակցությանը և այդպիսի խախտումների զոհերի իրավունքներիպաշտպանությանը:
բ) Իրականացել մարդու իրավունքների խախտումների կանխարգելման, պաշտպանության և բարեխղճությանծրագրեր մարդու իրավունքներիոլորտում:
գ) Զարգացնել Կոալիցիայի անդամ կազմակերպությունների միջնհամագործակցությունը:
դ)Զարգացնել Կոալիցիայի անդամ կազմակերպությունների մասնագիտական կարողություններն ու տեխնիկական հագեցվածության մակարդակը:ե) Կազմակերպել համաժողովներ, աշխատաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ,դասընթացներ, հանդիպումներ, քննարկումներ, իրականացնել մարդու իրավունքների ոլորտի զարգացմանն ուղղված այլ աշխատանքներ:

## 3. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Կոալիցիայի անդամ կարող են լինել հասարակական այնկազմակերպությունները, ներառյալ հասարակական շարժումները,նախաձեռնությունները, գործարարն ՏԻՄասոցիացիաները, լրատվական միջոցները,որոնք միացել են Կոալիցիայի Հռչակագրին, ընդունում են սույն Կանոնակարգը,իրենց գործունեությամբ նպաստում են Կոալիցիայի նպատակների իրագործմանը:
3.2 Գրավոր դիմումի համաձայն Կոալիցիայի անդամի ընդունելության մասին որոշումըկայացվում է Կոալիցիայի կառավարման խորհրդի կողմից՝ կառավարման խորհրդիառնվազն երկու անդամների երաշխավորմամբ:
3.3 Կոալիցիայի քարտուղարությունը վարում է իր անդամների հաշվառումը և պարբերաբար թարմացնումնրանց վերաբերյալ տվյալները: Կոալիցիայի անդամների հաշվառում վարելուկարգը և պայմանները սահմանվում է Կոալիցիայի կառավարման խորհրդի կողմից:
3.4 Կոալիցիայի անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավորդիմումի կամ Կոալիցիայի կառավարման խորհրդի՝ տվյալ անդամին Կոալիցիայիանդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնակարգի 3.6կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճկատարման համար:
3.5 Կոալիցիայի անդամն իրավունք ունի՝

- իր ներկայացուցիչների միջոցով մասնակցել Կոալիցիայի կառավարմանը,
- Կոալիցիայի գործունեության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,
- ազատորեն արտահայտել սեփական տեսակետը,

• նախաձեռնել ծրագրեր՝ ուղղված Կոալիցիայի զարգացմանը,

• իրազեկ լինել Կոալիցիայի գործունեությանը,

• օգտվել Կոալիցիայի իրավական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից,

• անարգել դուրս գալ Կոալիցիայի անդամությունից:

3.6 Կոալիցիայի անդամը պարտավոր է.

• բարձր պահել և տարածել մարդկայինարժեքները,

• մասնակցել և աջակցել Կոալիցիայի գործունեությանը,

• նպաստել Կոալիցիայի զարգացմանը,

• առանց Կոալիցիայի իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հանդեսչգալ Կոալիցիայի անունից,

• գործել սույն կանոնակարգին համապատասխան, կատարել Կոալիցիայիկանոնակարգի պահանջները, Կոալիցիայի ղեկավար մարմինների որոշումները:

3.7 Կոալիցիայի անդամը պատասխանատվություն չի կրում Կոալիցիայի կամ դրաանդամ այլ կազմակերպությունների պարտավորությունների համար, ինչպես նաևԿոալիցիան պատասխանատվություն չի կրում իր անդամներիպարտավորությունների համար:

## 4. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1 Կոալիցիայի կառավարման կառուցվածքն է՝ համաժողովը, կառավարմանխորհուրդը, և քարտուղարությունը, փորձագիտական կոմիտեն, Կոալիցիայի գործունեության ռազմավարական պլանով նախատեսված ծրագրերի իրականացման նպատակով ստեղծված Կոալիցիայի հանձնաժողովները, աշխատանքային և տարածքայինհանձնախմբերը և այլ կառույցները:

4.2 Կոալիցիայի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում էԿոալիցիայի համաժողովի կողմից սահմանված կարգով:

4.3 Կոալիցիայի բարձրագույն մարմինը նրա անդամների համաժողովն է, որինպատկանում է Կոալիցիայի կառավարման և գործունեության ցանկացած հարցիվերջնական լուծման իրավունքը:

4.4 Կոալիցիայի համաժողովը կարող է գումարվել ներկայացուցչական պատվիրակներիմիջոցով՝ կառավարման խորհրդի կողմից սահմանված քվոտայով: Կառավարմանխորհուրդը որոշում է համաժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաևհամաժողովի օրակարգի նախագիծը և այդ մասին համաժողովի անցկացումից ոչ ուշքան 10 օրացուցային օր առաջ էլեկտրոնային եղանակով ծանուցում է կոալիցիայիանդամներին:

4.5 Կոալիցիայի համաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով,որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին մեկանգամ:

4.6 Կոալիցիայի արտահերթ համաժողով գումարվում է Կոալիցիայի կառավարման խորհրդի, Կոալիցիայիքարտուղարության, Կոալիցիայի անդամներիընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում, ոչ ուշ, քան15 օրացուցային օրվա ընթացքում՝ Կոալիցիայի քարտուղարության կողմից:

Արտահերթ համաժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով: Կոալիցիայիհամաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե Կոալիցիայիհամաժողովին մասնակցում են Կոալիցիայի բոլոր անդամների կամ համաժողովիբոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում ենհամաժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Համաժողովըկարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել նաև կապի միջոցներով:

4.7 Կոալիցիայի համաժողովը.

ա) հաստատում է Կոալիցիայի կանոնակարգը, կատարում է փոփոխություններդրանում և (կամ) հաստատում է նոր կանոնակարգը,
բ) որոշում է Կոալիցիայի կառավարման խորհրդի թվաքանակն ու քվոտաները, մեկտարի ժամկետով ընտրում է Կոալիցիայի կառավարման խորհրդի անդամներին,փոփոխում է կառավարման խորհրդի կազմը, վաղաժամկետ դադարեցնում էկառավարման խորհրդի անդամների լիազորությունները,
գ) քննարկում և հաստատում է Կոալիցիայի կառավարման խորհրդի նքարտուղարության հաշվետվությունները:
4.8 Կոալիցիայի կառավարման խորհուրդը.
ա) համարվում է Կոալիցիայի ղեկավար մարմինը Կոալիցիայի համաժողովների միջևընկած ժամանակահատվածում,
բ) քննարկում և որոշումներ է կայացնում Կոալիցիայի գործունեությանն առնչվող բոլորհարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Կոալիցիայիհամաժողովի իրավասությունների մեջ,
գ) նախապատրաստում է Կոալիցիայի համաժողովները, սահմանում է Կոալիցիայիհամաժողովի պատվիրակների քվոտան ըստ Կոալիցիայի անդամների թվի,Կոալիցիայի համաժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ կազմակերպումէ Կոալիցիայի համաժողովի պատվիրակների ընտրությունը,
դ) որոշում է կայացնում Կոալիցիային անդամագրելու և անդամությունից հեռացնելուվերաբերյալ,
ե) որոշումներ է կայացնում Կոալիցիայի փորձագիտական կոմիտե, մշտական և ժամանակավորհանձնաժողովներ, աշխատանքային և տարածքային հանձնախմբեր և/կամ այլկառույցներ ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց աշխատակարգերը,որոնք չեն կարող հակասել սույն կանոնակարգին, նշանակում և ազատում է դրանցիամակարգողներին և պատասխանատուներին, վերջիններիս տալիս է լիազորագրեր,
զ) քննարկում և հաստատում է Կոալիցիայի ռազմավարական պլանը, կայունության ևֆինանսական պլանը, մոնիթորինգային ծրագիրը, տեսանելիության պլանը և այլփաստաթղթեր:
է) ընտրում է Կոալիցիայի փորձագիտական կոմիտեի հանձնաժողովների, աշխատանքային և տարածքայինհանձնախմբերի, և/կամ այլ կառույցների անդամներին,
ը) որոշում է կայացնում պետական և անկախ կառույցներին կից հասարակականխորհուրդներին, հանձնաժողովներին և այլ մարմիններին, ինչպես նաև մարդու իրավունքներին առնչվողմիջազգային ցանցերին Կոալիցիայի անդամակցելու վերաբերյալ,
է) հաստատում է կառավարման խորհրդի նախագահի ընտրության ռոտացիոն կարգը,ընտրում է կառավարման խորհրդի նախագահին և վաղաժամկետ դադարեցնում էկառավարման խորհրդի նրա լիազորությունները,
ժ) Կոալիցիայի անունից ընդունում և հանդես է գալիս հայտարարություններով,հաշվետվություններով, կոչերով և դիտարկումներով:
4.9 Կոալիցիայի կառավարման խորհուրդը իր հերթականնիստերը հրավիրում է երկու ամիսը մեկ անգամ՝ Կոալիցիայի քարտուղարությանկողմից: Կոալիցիայի կառավարման խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվելԿոալիցիայի կառավարման խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-իգրավոր պահանջով Կոալիցիայի քարտուղարության կառավարման խորհրդինախագահիկողմից կամ Կոալիցիայի քարտուղարության կառավարման խորհրդինախագահի կողմից անմիջականորեն: Կարող են հրավիրվել կառավարմանխորհրդի ընդլայնված նիստեր՝Կոալիցիայի հանձնաժողովների, փորձագիտականկոմիտեի և տարածքային հանձնախմբերի համակարգողների ևպատասխանատուների, ինչպես նաև Կոալիցիայի այլանդամներիմասնակցությամբ:

Կոալիցիայի կառավարման խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել նորոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամներիընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Կոալիցիայիկառավարման խորհրդի նիստին մասնակցողանդամների ձայների պարզմեծամասնությամբ:
4.10 Կոալիցիայի քարտուղարության գործառույթներն իրականացնողկազմակերպությունը ի պաշտոնե մտնում է Կոալիցիայի կառավարման խորհրդիկազմի մեջ: Կոալիցիայի քարտուղարության համակարգողը հանդիսանում էԿոալիցիայի խորհրդի նախագահը՝ մինչև կառավարման խորհրդի կողմիցկառավարման խորհրդի նախագահի ընտրության ռոտացիոն կարգի հաստատումնու նախագահի ընտրությունը: 4.11 Կոալիցիայի քարտուղարությունը.
ա) հանդիսանում է Կոալիցիայի գործադիր մարմինը,
բ) ապահովում է Կոալիցիայի մարմինների աշխատանքների բնականոն ընթացքը նթափանցիկությունը,
գ) նախագահում, արձանագրում և ստորագրում է Կոալիցիայի համաժողովի նիստերը,
դ) արձանագրում է կառավարման խորհրդի նիստերը,
ե) տնօրինում է Կոալիցիայի արխիվը,
զ) համակարգում է Կոալիցիայի կազմակերպչական աշխատանքները, այդ թվում՝Կոալիցիան ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, Կոալիցիայիանունից իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնում էԿոալիցիայի կողմից պատրաստված առաջարկները և այլ փաստաթղթերը,
է) համակարգում է Կոալիցիայի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտդրամական միջոցների հայթայթման աշխատանքները,
ը) վարում է Կոալիցիայի անդամների հաշվառումը, անդամության նոր դիմումներներկայացված հայտերի ռեեստրը,
թ) Կոալիցիայի քարտուղարության գործառույթները իրականացնում է «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպությունը, որի նախագահը իպաշտոնե հանդիսանում է Կոալիցիայի քարտուղարության համակարգողը:

4.12 Կոալիցիայի փորձագիտական կոմիտեն.
ա) բաղկացած է մարդու իրավունքների ոլորտի ճանաչված տեղական և միջազգայինփորձագետներից, անձանցից, որոնք ընտրվում են Կոալիցիայի կառավարման խորհրդիկողմից,
բ) տրամադրում է փորձագիտական աջակցություն Կոալիցիայի զարգացման ուհզորացման նպատակով,
գ) ուժեղացնում է Կոալիցիայի միջազգային կապերը,
դ) նպաստում է Կոալիցիայի ֆինանսական կայունության ապահովմանը,
ե) ներկայացնում է Կոալիցիան հակակոռուպցիոն կարևորագույն հարթակներում:

## 5. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1 Կոալիցիան չունի առանձնացված գույք:
5.2 Կոալիցիայի միջոցները գոյանում են օրենքով չարգելված աղբյուրներից:
5.3 Կոալիցիայի միջոցները Կոալիցիայի կառավարման խորհրդի որոշմամբ՝ներգրավվում են Կոալիցիայի անդամ կազմակերպության (ների) միջոցով, իսկներգրավված միջոցները օգտագործվում են բացառապես Կոալիցիայի նպատակներին խնդիրների իրականացման համար:

## 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Կոալիցիան կարող է դադարել համաժողովի որոշմամբ, եթե այդ որոշմանը կողմ է Համաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ը:
6.2 Կոալիցիայի դադարումը անդամ կազմակերպությունների համարպարտավորություններ չի առաջացնում:

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ, կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում, «Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիան» 2019 թ. մարտի 15-ին, կազմակերպել էր հանրային քննարկում **«Կարմիր գծերը վճարովի կայանտեղիներ են, թե՞…» թեմայով:**

Հանրային քննարկման մասնակիցները, քննարկելով Երևան քաղաքում ճանապրհների եզրերին վճարովի ավտոկայանատեղիների՝ այսպես կոչված «կարմիր գծերի» շուրջ ձևավորված առկա իրավական ու փաստացի հիմնախնդրները, արձանագրեցին, որ

1. վճարովի ավտոկայանատեղիներն իրականում չեն հանդիսանում ավտոկայանատեղի, այլ՝ ճանապարհի երթևեկելի մասի հատված են, որտեղ ճանապարհային երթևեկության կանոնների համաձայն ինչպես մինչ այսպիսի կայանատեղիների ձևական կազմակերպումն այնպես էլ դրանից հետո՝ թույլատրված է տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը, հետևաբար ներկի և որոշ տեղերում տեսախցիկների առկայությունը դեռ բավարար հիմք չէ դրանց վճարովի դրաձնելու համար,
2. վճարովի ավտոկայանատեղի կիառամը մինչ օրս չի նպաստել Երևան քաղաքի ու մասնավորապես քաղաքի կենտրոնի ավտոտրանսպորտային միջոցներից բեռնաթափմանը, ինչը հանդիսանում է հայտարարված նպատակ տվյալ տեղական վճարը սահմանելու համար,
3. վճարովի կայանատեղիները լրացուցիչ ծանրաբեռնվածություն են առաջացրել բակային, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքներում, դրանք առավել անհասանելի դարձելով քաղաքացիների համար,
4. քաղաքաքացու կողմից ավտոկայանատեղի համար վճարումը դեռ չի երաշխավորում նրա կայանման հնարավորությունը. շատ դեպքում վճարումն իրականացրած վարորդը կայանման տեղ չի կարողանում գտնել,
5. վճարի կիրառմամբ խախտվում է քաղաքացիների իրավունքները, քանի որ փաստացի նրանք այդ վճարի դիմաց ծառայություն չեն ստանում, առավել ևս նրանք ովքեր Երևանի բնակիչներ չեն հանդիսանում,
6. սահմանված վճարների հաշվարկման և հավաքագրման առումով առկա են բազմաթիվ իրավական բացեր, մասնավորապես փաստացի կայանման ժամանակի հաշվարկի, վճարման իրականացնելու պարտավորության կատարման և դրա չկատարման տույժերի կիրառման առումով և այլն,

7. Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող «վարչարարությունը» նվազագույն աղերսներ ունի Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի և ընդհանրապես օրինականության հետ:

Հետևաբար, ելնելով վերոհիշյալից, **կոչ ենք անում Երևան քաղաքի իշխանություններին վերացնել այսպես կոչված «կարմիր գծերը»՝ դադարեցնելով Երևան քաղաքում ճանապարհների երթևեկելի մասի եզրերի կարմիր գծերով գծանշումների իրականացումը, դրանց դիտարկումը որպես վճարովի ավտոկայանատեղի, և դրանցում կայանման համար տեղական վճարների գանձումը**:

Երևանում առկա տրանսպորտային և երթևեկության խնդիրներից ելնելով առաջարկում ենք,

- մշակել Երևան քաղաքում տրանսպորտային և երթևեկության բարելավման հայեցակարգ, որը կներառի քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան կահավորված ճարտարագիտական կառույց հանդիսացող ավտոկայանատեղիների կառուցում՝ բացառելով ճանապարհի հատվածները այդ նպատականին օգտագործելու անարդյունավետ պրակտիկան,
- հայեցակարգով սահմանել այն հիմանական աղբյուրները, որոնք կարող են օգտագործվել ավտոկայանատեղերի կառուցման ֆինանսավորման և շահագործման համար, որը կարող է լինել նաև տվյալ կառույցներում տրամադրված ավտոկայանատեղի համար գանձված վճարները,
- նման տիպի վճարներ սահմանելիս ապահովել, որ վճարի գանձումը երաշխավորի ծառայությունից օգտվելու իրական հնարավորությունը:

Միևնույն ժամանակ տեղական իշխանություններին կոչ ենք անում հանրային ծառայությունների մատուցումը իրականացնել հիմնվելով միջազգային պրակտիկայում գործող սկզբունքների հիման վրա, երբ գանձված վճարները ուղղվում են ծառայության մատուցմանը, և դրանից հետո հատկացվում այլ նպատակների:

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ, կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում մայիսի 29-ին, «Անի Պլազա» հյուրանոցի «Դվին» սրահում, Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիան կազմակերպել է հանրային քննարկում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպաություն և վերջիններիս հասարակություն ներառման խնդիրները» թեմայով:

Հանրային քննարկման մասնակիցները, քննարկելով ներկայացված ոլորտում առկա խնդիրները մշակել են առաջարկությունների փաթեթ խնդիրները կարգավորելու և որոշակիորեն խթանելու համար:

Ներկայացնում ենք առաջարկությունները.

- ԶԼՄ-ները հաճախակի անրադառնան հաշմանդամության թեմային
- ֆիլմերում, սերիալներում, ընդգրկել հաշմանդամության տարբեր տեսակ ունեցող մարդկանց/դերակատարներին/կերպարներին
- Դասագրքերի նկարազարդումներում ներկայացնել տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց պատկերներ
- Հանրությանը կրթել հաշմանդամության թեմայի վերաբերյալ

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ, կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում, «Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիա»-ն փետրվարի 27-ին «Մարդու իրավունքները ՀՀ Զինված ուժերում» թեմայով քննարկում:

Քննարկումը ծավալվեց բանակում առկա խնդիրների շուրջ, որոնց հետ կապված հանդես եկանք օրենսդրական առաջարկություններով՝

1. Զորակոչի գործընթացի ամբողջական վերանայում և համապատասխանեցում արդի չափանիշներին, մասնավորապես՝ զորակոչի թափանցիկացում, զորակոչիկների առողջական չափանիշների խստացում, զորակոչիկների առողջական վիճակի զննության ընթացքում անկախ փորձագետների ներգրավում, զորակոչիկների բաշխման հստակ, արդարացի և հայեցողականությունը բացառող մեխանիզմների ձևավորում, բժշկական հանձնաժողովների նկատմամբ զորակոչային հանձնաժողովների հսկողության բացառում՝ այդ նպատակով կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Այդ օրենսդրական փոփոխություններն անհրաժեշտ են, որպեսզի հետագայում զորակոչիկների առողջական գանգատներն արձանագրվեն պատշաճ կարգով, իսկ այնուհետև զինվորական ծառայության ընթացքում առողջական գանգատ ունենալու դեպքում տրամադրվի պատշաճ բուժօգնություն:
2. Միջազգային չափանիշներին համապատասխանող ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքի մշակում և ընդունում (ներգրավելով նաև անկախ փորձագետների), որը մասնավորապես պետք է ապահովի զինծառայողների կարգապահական պատասխանատվության հստակ մեխանիզմներ, պարունակի կոնկրետ կարգապահական զանցանքների և դրանց դիմաց կոնկրետ կարգապահական տույժերի համակարգ, բողոքարկման հստակ մեխանիզմներ ու երաշխիքներ, հրամանատարների պատասխանատվության գործուն մեխանիզմներ, բացառի կարգապահական կալանքը կամ ազատության սահմանափակման այլ ձևերը և այլն: Ազատազրկման ձևով պատիժը կարգապահական խախտման համար խթանում է քրեական գործերով վկաների, տուժողների, մեղադրյալների նկատմամբ ճնշումները՝ կարգապահական խախտման

անվան տակ նրանց տեղավորելով ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչներում կամ մեկուսարաններում, ինչը պետք է կանխել:

3. Բարձրագույն և ավագ հրամանատարական ու սպայական կազմի զինծառայողների եկամուտների հայտարարագրում և ամենամյա բաց հրապարակում: Այսպիսի փոփոխությունը կարող է նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը:

4. Զինծառայողի, հատկապես սպայի օրինակելի կերպարի ձևավորման պետական քաղաքականության մշակում և իրականացում, այդ նպատակով զինծառայողի վարքականոնի մշակում և ընդունում:
5. Զինված ուժերում կադրերի կրթության, առաջխաղացման և ընտրազատման արդյունավետ ու թափանցիկ համակարգերի ձևավորում, մասնավորապես՝ ռազմական կրթության համակարգի ինտեգրում հանրապետության կրթական համակարգին, թափուր պաշտոնների համալրում բաց մրցույթներով և այլն:
6. Տուժողների իրավունքների և շահերի պաշտպանության գործուն համակարգի ձևավորում, այդ նպատակով կատարելով համապատասխան օրենսդրական և կառուցվածքահամակարգային փոփոխություններ, ձևավորելով տուժողների ներկայացուցիչների և նրանց շահերը ներկայացնող պաշտպանական կողմի հետ պետական մարմինների և պաշտոնատար անձանց կառուցողական գործակցության համակարգ ու մեխանիզմներ, ինչպես նաև տուժողներին և նրանց ընտանիքների անդամներին բարոյական ու նյութական արժանապատիվ փոխհատուցման պայմաններ ու մեխանիզմներ:
7. Սպաների սեռական կողմնորոշման բացահայտում համապատասխան մասնագետներից կազմված հանձնաժողովի կողմից, զինվորական ծառայության հետ անհամատեղելիության դեպքում՝ նրանց ծառայությունը շարունակելու հարցի լուծում, ինչը կկանխի սեռական բնույթի հանցագործությունները բանակում:
8. Անհրաժեշտ է հստակեցնել զինծառայողների սահմանափակ ծառայությունը համապատասխան օրենսդրական փոփոխությամբ, կանոնակարգել, որպեսզի սահմանափակ ծառայությամբ բանակ զորակոչվող զինծառայողի համար չստեղծվեն իր առողջական վիճակին անհամատեղելի ծառայության հետ կապված իրավիճակներ: Դա կկանխի առողջական խնդիրների պատճառով զինծառայողների մահացությունները, ինչպես նաև նրանց առողջությանն անդառնալի վնասի պատճառումը:
9. Անհրաժեշտ է ստեղծել արագ արձագանքման խումբ տարբեր անկախ մասնագետներից կազմված, որպեսզի ցանկացած դեպքի ժամանակ, երբ

զինծառայող է տարվում ռազմական ոստիկանություն, ժամանի այնտեղ և իրականացնի համապատասխան ստուգումներ՝ կատարված գրառումների, ինչպես նաև զինծառայողի առողջական վիճակի (զննելով նրան) և կարգավիճակի վերաբերյալ: Դա կկանխի զինծառայողների իրավունքների մի շարք խախտումներ, այդ թվում՝ նաև նրանց անհիմն երկար ժամանակով ռազմական ոստիկանությունում պահելը և տարբեր քրեական գործերով վկաների, տուժողների, մեղադրյալների նկատմամբ իրականացվող ճնշումները: Նշված խմբի ստեղծման համար անհրաժեշտ է ՀՀ պաշտպանության նախարարության և մարդու իրավունքների ոլորտին առնչվող հասարակական կազմակերպությունների հետ ստեղծել համաձայնագիր, քանի որ այդ խմբի անդամները հանրային վերահսկողություն են իրականացնելու:

**Համաձայնագիր**

**«Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիա» ստեղծելու մասին**

Մենք՝ Մարդու իրավունքների ոլորտում գործող 10 հասարակական կազմակերպություններս՝ «Լրագրողներ Հանուն Մարդու Իրավունքների» հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ՝ 01243309, հասցե՝ ք. Երևան, Լենինգրադյան 18շ., բն. 53), ի դեմս նախագահ Ժաննա Ալեքսանյանի, մի կողմից, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ՝ 06948712, հասցե՝ ք. Վանաձոր, 7-րդ փողոց, 6 փակուղի, տնակ 12), ի դեմս նախագահ Անուշ Ասլանյանի, «Իրավունքի Ուժ» հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ՝ 02268006, հասցե՝ ք. Երևան, Ն. Շենգավիթ 11 փողոց, 39/1, բն 30), ի դեմս նախագահ Սոնա Հովակիմյանի, «Ազատ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ՝ 01268359, հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 19 շ., բն 16), ի դեմս նախագահ Լիլիթ Թաղնոսյանի, «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ՝ 06610546, հասցե՝ ք. Ալավերդի, Սայաթ Նովա փողոց 14/35), ի դեմս նախագահ Օլեգ Դուրգարյանի, «Մարդու Իրավունքների Միջազգային Հանրություն» հասարակական կազմակերպություն (ՀՎՀՀ՝ 00448422, հասցե՝ ք. Երևան, Նոր Արեշ 4 փողոց, 47 տուն), ի դեմս նախագահ Բելլա Շիկարյանի, «Տնտեսական Իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպություն (ՀՎՀՀ՝ 01821657, հասցե՝ ք. Երևան, Հարավ-Արևմտյան Բ2 թաղամաս, Ա. Բաբաջանյանի փողոց, /Շ/93/11), ի դեմս նախագահ Մովսես Արիստակեսյանի, «Քաղաքացի, Հարկատու-Բիզնես իրավապաշտպան» հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ՝ 00107356, հասցե՝ ք. Աբովյան, 3-րդ միկրոշրջան, 6 շ., բն. 22), ի դեմս նախագահ Էդուարդ Բաղալյանի, «Լրագրողներ հանուն ապագայի» հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ՝ 00864175, հասցե՝ ք.Երևան, Ազատություն 24, 3-րդ հարկ), ի դեմս նախագահ Սուրեն Դեհերյանի և «Ազատ քաղաքացի, քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ՝ 00119708, հասցե՝ Կոմիտասի 5ա, բն 13), ի դեմս Հովսեփ Խուրշուդյանի, մյուս կողմից, ստորագրում ենք համաձայնագիր Հանուն Հավասար Իրավունքների կոալիցիա ստեղծելու մասին:

Սույն Համաձայնագրին մասնակից հասարակական կազմակերպություններն ազդարարում են մարդու իրավունքների ոլորտում առկա խնդիրների կանխարգելման և վերացման համար պայքարի գործում համատեղ գործունեության և գործընկերության մասին՝ հռչակելով Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիայի ստեղծումը:

Համաձայնագրի հիմնական նպատակն է՝

- ստեղծել համագործակցության գործուն մեխանիզմներ «Իրավաբանների հայկական ասոցիացիայի» կողմից իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում:

Կողմերի ստորագրությունները

| | |
|---|---|
| «Լրագրողներ Հանուն Մարդու Իրավունքների» ՀԿ | Նախագահ՝ Ժաննա Ալեքսանյան |
| «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց ՀԿ | Նախագահ՝ Անուշ Ասլանյան |
| «Իրավունքի Ուժ» ՀԿ | Նախագահ՝ Սոնա Հովակիմյան |
| «Ազատ լրագրողների ասոցիացիա» ՀԿ | Նախագահ՝ Լիլիթ Թադևոսյան |
| «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» ՀԿ | Նախագահ՝ Օլեգ Դուրգարյան |
| «Մարդու Իրավունքների Միջազգային Հանրություն» ՀԿ | Նախագահ՝ Բելլա Շիկարյան |

| | |
|---|---|
| «Տնտեսական Իրավունքի կենտրոն» ՀԿ | Նախագահ՝<br>Մովսես Արիստակեսյան |
| «Քաղաքացի, Հարկատու-Բիզնես իրավապաշտպան» ՀԿ | Նախագահ՝<br>Էդուարդ Բադալյան |
| «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ | Նախագահ՝<br>Սուրեն Դեհերյան |
| «Ազատ քաղաքացի, քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոն» ՀԿ | Նախագահ՝<br>Հովսեփ Խուրշուդյան |

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ, կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում, **«Ոչ թափանցիկ և մանիպուլիատիվ գործունեության վտանգները մեդիա ոլորտում»** թեմայով հունիսի 4-ին կազմակերպվել է հանրային քննարկում:

Հանրային քննարկման մասնակիցները, քննարկելով ներկայացված ոլորտում առկա խնդիրները մշակել են առաջարկությունների փաթեթ խնդիրները կարգավորելու և որոշակիորեն խթանելու համար:

Ներկայացնում ենք առաջարկությունները.

- Նպաստել ԶԼՄ-ների սեփականատերերի և խմբագրակազմի մասին բաց տեղեկատվության հասանելիությանը
- Աջակցել լրագրողների մասնագիտական պատրաստվածության ապահովմանը
- Նպաստել հետաքննական լրագրության զարգացմանը
- Լրատվամիջոցներում ձևավորել փաստերի ստուգման մշակույթ
- Նպաստել հավաստի և որակյալ տեղեկատվություն մատուցող լրատվամիջոցների հզորացմանը

# Առաջարկություններ

*Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ, կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում, «Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիան» կազմակերպել էր հանրային քննարկում «Սպառնալիքներ իրավապաշտպանների նկատմամբ. ատելության խոսքը համացանցում» թեմայով:*

*Քննարկման ընթացքում ներկաների հետ մշակվեց առաջարկներ՝*

**ՀՀ արդարադատության նախարարին**՝ հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը ուսումնասիրել ատելության խոսքի դեմ պայքարելու նպատակով օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ նախաձեռնելով մասնագիտական քննարկումներ։

**ՀՀ-ում գործող ԶԼՄ-ների խմբագիրներին,** լրատվական կայքերի մոդեռատորներին ու ԶԼՄ-ներին՝ սոցիալական ցանցերում առկա էջերի/խմբերի պատասխանատուներին՝ վերահսկել ձեր կողմից արվող հրապարակումների ներքո արվող մեկնաբանությունները՝ բացառելով ատելության խոսքն ու բռնության հրահրումը, անհրաժեշտության դեպքում արգելափակելով ատելություն սերմանող օգտատերերի հաշիվները։

**ՀՀ կառավարությանը**՝ ծավալել համապետական արշավ ատելության խոսքի, դրա հետևանքների ու ատելության հիմքով հանցագործությունների բացառման ուղղությամբ՝ ներգրավելով հասարակական, քաղաքական, մշակութային ոլորտների որոշակի ճանաչում և բարձր հեղինակություն ունեցող անձանց։

| *ՔՀԿ-ների կոալիցիայի/ցանցի անվանումը* | | *Կոալիցիայի անդամ ՔՀԿ-ի անվանումը* |
|---|---|---|
| | | |
| Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիա | 1 | «Լրագրողներ Հանուն Մարդու Իրավունքների» ՀԿ |
| | 2 | «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց ՀԿ |
| | 3 | «Իրավունքի Ուժ» ՀԿ |
| | 4 | «Ազատ լրագրողների ասոցիացիա» ՀԿ |
| | 5 | «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» ՀԿ |
| | 6 | «Մարդու Իրավունքների Միջազգային Հանրություն ՀԿ |
| | 7 | «Տնտեսական Իրավունքի կենտրոն» ՀԿ |
| | 8 | «Քաղաքացի, Հարկատու-Բիզնես իրավապաշտպան» ՀԿ |
| | 9 | «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ |
| | 10 | «Ազատ քաղաքացի, քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոն» ՀԿ |
| | 11 | |
| | 12 | |
| | 13 | |

| Մարզ/ք. Երևան | Կնոջ/տղամարդու կողմից ղեկավարվող Կ/Տ |
|---|---|
| | |
| ք.Երևան | Կ |
| Լոռու մարզ/ք.Վանաձոր | Կ |
| ք.Երևան | Կ |
| ք.Երևան | Կ |
| Լոռու մարզ/ք.Ալավերդի | Տ |
| ք.Երևան | Կ |
| ք.Երևան | Տ |
| Արարատի մարզ/ք.Աբովյան | Տ |
| ք.Երևան | Տ |
| ք.Երևան | Տ |
| | |
| | |
| | |